ԱՎԴԱԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ
(ՍԻ)
1952Թ. ՀՈՒԼԻՍՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՂՊՏԻԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎՐԱ

Երկրորդ աշխարհամարտից հետո Եգիպտոսի ներքաղաքական իրավիճակն այնքան էլ հանգիստ ու կայուն չէր՝ պայմանավորված քաղաքական կուսակցությունների միջև հարաճուն հակասություններով, իշխանավորների հանդեպ զանգվածների նկատելիորեն աճող դժգոհությամբ, տնտեսության երկարատև ճգնաժամային իրադրությամբ, ինչպես նաև 1948-1949թթ. արաբ-իսրայելական պատերազմում եգիպտական և ընդհանրապես արաբական բանակների կրած պարտությամբ: Ուստի ընդհատակում գործող «Ազատ սպաներ» կազմակերպության 1952թ. հուլիսի 23-ին իրականացրած հեղափոխությունը որոշակի սպասումներ արթնացրեց Եգիպտոսի ժողովրդի մեջ: Այդ օրը՝ առավոտյան ժամը 7-ին Կահիրեի ռադիոն հիշյալ կազմակերպության անունից հայտարարեց, որ երկրում հեղավտխություն է տեղի ունեցել[1]: Եգիպտոսում ամբողջ իշխանությունը կենտրոնացվեց «Ազատ սպաներ» կազմակերպության Գործադիր կոմիտեի ձեռքում, որն այդուհետ կոչվեց Հեղավտխության ղեկավարության խորհուրդ (ՀՂԽ): Վերջինիս աշխատանքները, փաստորեն, գլխավորում էր հեղափոխության կազմակերպիչ և գաղափարական ղեկավար Գամալ Աբդ Ալ-Նասերը: Նա նաև նոր վարչակարգի հիմնական շարժիչ ուժն էր[2]: Հեղավտխությունից հետո Նասերն աստիճանաբար հիմք դրեց ազգայնացմանն քաղաքականությանը՝ միաժամանակ որդեգրելով սոցիալիստական գաղափարախոսության որոշ տարրեր[3]:

Մինչև հեղափոխությունը բնիկ եգիպտացի, արևելաքրիստոնեական միաբնակ եկեղեցիներից մեկի հետևորդները հանդիսացող ղպտիները բավականին պատշաճ դերակատարում ունեին Եգիպտոսի հասարակական-քաղաքական կյանքում և որոշակիորեն ներգրավված էին այդ ժամանակաշրջանում գործող քաղաքական

կուսակցություններում: Նրանք հիմնականում խորհրդարան էին ներթափանցում «Վաֆդ» կուսակցության համամասնական ցուցակներով: 1924-1950թթ. ընթացքում տեղի ունեցած տասը խորհրդարանական ընտրություններից վեցի արդյունքում դպտի պատգամավորները կազմել էին խորհրդարանի 7,5-10,2 տոկոսը[4]: Սակայն 1953թ. հունվարի 18-ին ընդունված օրենքով արգելվեցին Եգիպտոսի բոլոր քաղաքական կուսակցությունները՝ բացառությամբ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության[5]: Կուսակցությունների լուծարումից հետո դպտիները հիմնականում դուրս մնացին կառավարման ընտրովի մարմիններից, քանի որ Եգիպտոսի գրեթե ոչ մի ընտրատարածքում նրանք մեծամասնություն չէին կազմում, հետևաբար նաև իրական հնարավորություն չունեին իրենց թեկնածուներն ունենալու ներկայացուցչական մարմիններում[6]: Քանի որ օրենսդիր մարմնում դպտիների ներկայությունը զգալիորեն կրճատվել էր, 1964թ. ժամանակավոր սահմանադրության 49-րդ հոդվածով նախատեսվեց խորհրդարանում ձևավորել տասը հոգուց բաղկացած Ումմայի խորհուրդ, որի կազմավորման իրավունքը վերապահվեց երկրի նախագահին: Նրանում ներգրավված տասն անձինք պատգամավորական տեղեր էին զբաղեցնում խորհրդարանում՝ համարվելով օրենսդիր մարմնի լիիրավ անդամներ: Խորհրդը նպատակ ուներ երկրի օրենսդիր մարմնում ապահովել դպտիների ներկայությունը: Եթե 1964թ. նրանում կար յոթ դպտի, ապա 1970թ. դպտիների թիվն արդեն հասնում էր ինների[7]: Հակառակ այս քայլերին դպտիները սկսեցին տարակուսել, որ Նասերի վարչախումբը փորձում էր իրենց դուրս մղել երկրի քաղաքական կյանքից, քանի որ հեղափոխությունից հետո, ի տարբերություն նախահեղափոխական շրջանի, դպտի պատգամավորների թիվը նվազեց՝ կազմելով խորհրդարանի 3 տոկոսը: Դպտիների կասկածներն ու դժգոհությունները մեղմելու նպատակով Նասերի վարչախումբը նրբանկատորեն փորձեց զիջման գնալ և շարունակեց նախկինի նման կառավարությունում մեկ նախարարական աթոռ հատկացնել դպտիներին[8]: Բացի պաշտոնական գործառույթներից՝ դպտի նախարարն ուսումնասիրում և վերհանում էր դպտիների հիմախնդիրները և դրանք ներկայացնում կառավարությանը: Նշենք, որ 1952-1962թթ., երբ կառավարությունում նախարարների թիվն աստիճանաբար 13-ից հասավ 36-ի, դպտիների համամասնական

ներգրավվածությունը մնաց անփոփոխ[9]: Վերոնշյալ քաղաքականությունը միտված էր նաև ապահովելու երկրի ողջ քրիստոնյա բնակչության աջակցությունն Իսրայելի դեմ պայքարում: Ուստի 1964թ. մարտին կազմավորված կառավարությունում ղպտիների դիրքերը որոշակիորեն ամրապնդվեցին. նրանք ստացան նաև վիոխնախարարի երկու լրացուցիչ պաշտոն և պահպանեցին դրանք մինչև 1967թ. հունիս ամիսը[10]:

1953թ. հունվարի 13-ին կազմավորվեց նոր Սահմանադրության նախագիծը մշակող հանձնաժողով, որի մեջ ընդգրկված էին հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներ: Իշխանությունը փորձեց նաև այդտեղ ապահովել ղպտիների մասնակցությունը. 50 հոգուց կազմված հանձնաժողովում 6-ը ղպտի էր[11]:

Մինչև հեղափոխությունը պետական կառավարման համակարգի գրեթե բոլոր ոլորտներում ղպտիները նշանակալի դեր ու ազդեցություն ունեին: Այդ շրջանում միջին և կրտսեր օղակների ղպտի պաշտոնյաները մեծ թիվ էին կազմում նախարարություններում, նրանց վստահվում էին նաև պետական բարձր պաշտոններ[12]: Նախարարություններում նրանք զբաղեցնում էին պաշտոնների մոտավորապես 45 տոկոսը: Այդ փաստը պատճառաբանում էին նրանով, որ նրանք կազմում էին գրագետ եգիպտացիների 30 տոկոսը, ինչպես նաև վերահսկում էին երկրի տնտեսության 19 տոկոսը[13]: Այդուհանդերձ հեղափոխությունից անմիջապես հետո նոր իշխանությունը զգալիորեն խարխլեց ղպտիների դիրքերը պետական կառավարման համակարգում: Բարձր և պատասխանատու պաշտոնները գերազանցապես վստահվում էին մուսուլմաններին, և միայն մի քանի պետական գերատեսչություններում ղպտիներին հաջողվեց պահպանել իրենց դիրքերը: Հեղափոխությունից հետո Ֆինանսների նախարարությունում նրանք կազմում էին աշխատակազմի 15,9 տոկոսը, Տարածքային կառավարման նախարարությունում՝ 15,4, Գյուղատնտեսության նախարարությունում՝ 7,7, Կրթության նախարարությունում՝ 6,2[14]: Չնայած Տարածքային կառավարման նախարարությունում ղպտիների որոշակի ներգրավվածությանը՝ Եգիպտոսի 37 քաղաքներից և ոչ մեկում ղպտի քաղաքապետ չէր նշանակվում: Ինչ վերաբերում է Կրթության նախարարությանը, ապա պետք է շեշտել հատկապես այն իրողությունը, որ Եգիպտոսի 12 համալսարանների, 150 ինստիտուտների և գիտական

հաստատությունների ղեկավար պաշտոններում ղպտիներ չէին նշանակվում: Ֆակուլտետների դեկանները նույնպես մեծամասամբ մուսուլմաններ էին[15]: Ղպտի կադրերի ներգրավվածության առումով պատկերը շոշափելիորեն չէր տարբերվում նույն Արտաքին գործերի նախարարությունում, որտեղ Նասերի իշխանության տարիներին ղպտի դեսպան չէր նշանակվում, և ղպտիները կազմում էին ողջ դիվանագիտական անձնակազմի միայն մոտ 2,5 տոկոսը[16]:

Փաստենք նաև որ, 1952թ. հուլիսյան հեղափոխությունից հետո նախագահ Նասերի մշակած «արաբական սոցիալիզմի» կառուցման նոր քաղաքական գաղափարախոսության շրջանակներում ղպտիների դերը զգալիորեն նվազեց ոչ միայն Եգիպտոսի քաղաքական, այլև տնտեսական կյանքում: Ազգայնացման քաղաքականության հետևանքով՝ հատկապես հողատիրության չափերի աննախընթաց կրճատման արդյունքում ղպտիները հարաբերաբար ավելի տուժեցին, քան մուսուլմանները: Փաստորեն Եգիպտոսում ղպտիների դիրքերն էլ ավելի տկարացան:

1952թ. սեպտեմբերի 9-ի հողային բարեփոխումների վերաբերյալ օրենքով խոշոր հողատիրության առավելագույն չափը սահմանվեց 200 ֆեդդան[17], իսկ ավելցուկները բռնագրավվում էին և վաճառվում սակավահող գյուղացիներին[18]: Արդյունքում սեփականազրկվեցին նաև հելլենակավոր ղպտի շատ ընտանիքներ, որոնց մեծ մասի կալվածքների չափերը գերազանցում էին 1000 ֆեդդանը: Ըստ պաշտոնական տվյալների՝ մինչև հեղափոխությունն այդ ընտանիքները վճարում էին Եգիպտոսի ընդհանուր հողահարկի շուրջ 16 տոկոսը[19]: Իսկ արդեն 1961թ. հուլիսի 25-ին ընդունվեց նոր հողային օրենք, որով հողատիրության առավելագույն չափաբաժինն էլ ավելի կրճատվեց և իջեցվեց մինչև 100 ֆեդդանի[20]: Հողատարածքների ազգայնացումը զգալի նյութական վնաս հասցրեց նաև ղպտիական եկեղեցուն: Չնայած հոգևորականներն ընդհանրապես խուսափում էին եկեղեցապատկան հողատարածքների վերաբերյալ ճշգրիտ տվյալներ հրապարակել, սակայն որոշ ուսումնասիրողներ նշում են, որ 1927թ. պաշտոնական տվյալներով ղպտիական յոթ վանական համալիրների հողատարածքների չափերը գերազանցում էր 9 հազար ֆեդդանը[21]: Այս չավուսքանակը մոտ է 1952թ. ղպտիական համայնքային խորհրդի կողմից գեներալ Նագիբին տրամադրած տվյալներին, որտեղ

պատրիարքական խոդերը հաշվվում էին 3.5 հազար, իսկ վանքապատկանները՝ 6 հազար ֆեդդան[22]:

1960-1961թթ. ընթացքում տրանսպորտի ոլորտի խոշոր ղպտի ներդրողները նույնպես իրենց պատկանող ընկերությունների ամբողջական ազգայնացման արդյունքում լուրջ կորուստներ ունեցան: Մինչ այդ տրտսպորտի բնագավառում՝ հիմնականում Կահիրեի ներքաղաքային և միջքաղաքային ավտոբուսային ընկերություններում տիրապետող էր ղպտիական կապիտալը, որին պատկանող «Օթոբուս իխվան», «Ասյութ» և այլ ընկերություններն իրականացնում էին ներքաղաքային և միջքաղաքային փոխադրումների մոտ 75 տոկոսը[23]:

Ղպտիների տնտեսական դիրքերի թուլացմանը նպաստեց նաև ոլջ բանկային համակարգի ազգայանցումը, քանի որ Եգիպտոսի երեք ամենախոշոր՝ Ազգային, Կահիրեի և «Միսր» բանկերի ներդրումային կապիտալի զգալի մասը պատկանում էր խոշոր ղպտի ընտանիքներին[24]:

Ընդհանուր առմամբ, ազգայնացման հետևանքներից էր նաև այն, որ ղպտիական համայնքը կորցրեց իր տնտեսական հզորությունը, սակայն շնորհիվ կրթության և մասնագիտական պատրաստվածության բարձր մակարդակի՝ որոշ ոլորտներում այն պահպանեց իր ամուր դիրքերը: Նույնիսկ հեղափոխությունից հետո բժիշկների, դեղագործների, առևտրականների, բանկային համակարգի ծառայողների մեծ մասը շարունակում էին մնալ ղպտիները: Տարբեր գնահատումներով՝ դեղագործության ասպարեզում ղպտի էր մասնագետների 80 տոկոսը, իսկ բժշկության ասպարեզում՝ 30-40 տոկոսը[25]:

Հեղափոխությունից հետո նոր իշխանության վարած քաղաքականությունը հանգեցրեց մեծ թվով եգիպտաբնակ ղպտիների, ինչպես նաև այլ քրիստոնյաների արտագաղթին: 1960թ. պաշտոնական մարդահամարի տվյալներով ղպտիների թիվը Եգիպտոսում կազմում էր ամբողջ բնակչության թվի 7,3 տոկոսը[26]: 1960-ականներից սկսած՝ այդ թիվը սկսեց նվազել: 1966թ. մարդահամարի տվյալներով՝ 1960-1966թթ. Եգիպտոսից արտագաղթել էր 294 հազար մարդ, որից 150 հազարը՝ ղպտի[27]:

Այսպիսով, կարելի է փաստել, որ Նասերի վարած քաղաքականությունը, ի թիվս այլ խնդիրների, հանգեցրեց նաև Եգիպտոսի ղպտի բնակչության տնտեսական և քաղաքական մեկուսացմանը: Ղպտիական համայնքը կորցրեց իր երբեմնի դիրքերը քաղաքական և տնտեսական կյանքում:

ARTHUR AVDALYAN
(IOS)

THE IMPACT OF 1952's JULY REVOLUTION ON THE POLITICAL AND ECONOMIC SITUATION OF THE EGYPT COPTIC COMMUNITY

Before the 1952's July revolution the Coptic Community of Egypt had been enough represented in the Government and the Parliament. After the revolution its ideological leader Gamal Abd Al-Naser centralized the rule and economy of the country. The Coptic Community was isolated both politically and economically because of the revolutionaries' mentioned policy. As a result, the Copts lost their role in the political and economic life of Egypt.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արզարյան Ե., Քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխությունները եգիպտական հողավոխության առաջին փուլում, Սիրձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XIV, Եր., 1987, էջ 177:
2. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. III, Եր., 2006, էջ 256:
3. Սամիրա Բահր, Ալ-ակբատ ֆի հայաթ ալ- սիյասիյա ալ-Միսրիյա, Ալ-Կահիրա, 1984, էջ 149, (արաբերեն):
4. Շաֆիկ Սուլեյման, Ալ-ակբատ բայն ալ-հիրման ալ-բանիսի վա ալ-վատանի, Ալ-Կահիրա, 1996, էջ 201, (արաբերեն):
5. Արզարյան Ե., նշվ. աշխ., էջ 199:
6. Betts Robert Brenton, Christion in the Arab East: A Political Study, Athens, 1995, p. 61.
7. Սամիրա Բահր., նշվ. աշխ., էջ 168:
8. Dekmejian H., Egypt Under Nasir: A Study in Political Dynamics, London, 1971, p.176-177.
9. Շաֆիկ Սուլեյման, նշվ. աշխ., էջ 205:
10. Dekmejian H., նշվ. աշխ., էջ 176:
11. Հովհաննիսյան Ա., Եգիպտոսի ազգային և կրոնական փոքրամասնությունները (1907-1967 թվականներ), ատենախոսություն՝ պաշտպանված ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդում, Եր., 2002, էջ 129:
12. Kyriakos Mikhail, Copts and Moslems under British Control. A Collection of Facts and a Resume of Authoritative Opinions on the Coptic Question, London, 1911, p. 44.
13. Behrens-Abouseif Doris, The Political Situation of the Copts 1789-1923, Christians and Jews in the Ottoman Empire, Vol. 2, New York, 1982, p. 199.
14. Սամիրա Բահր., նշվ աշխ., էջ 164:
15. Նույն տեղում, էջ 160:
16. Karas Shawkey, The Copts Since the Arab Invasion: Strangers in their Own Land. Jersey City, 1985, p. 114.
17. Եգիպտոսում 1 ֆեդանը հավասար է 0,42հա.:
18. Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 259:
19. Carter Barbara Lynn, The Copts in Egyption Politics, London, 1986, p. 210.
20. Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 281:
21. Carter Barbara Lynn, նշվ. աշխ., էջ 42:
22. Baer Gabriel, A History of Landownership in Modern Egypt 1800-1950, London, 1962, p. 179.
23. Սամիրա Բահր., նշվ աշխ., էջ 162:
24. Նույն տեղում, էջ 163:
25. Chitham E. J., The Coptic Community in Egypt: Spatial and Social Change, Durham, 1986, p. 82.
26. Karas Shawkey, The Copts Since the Arab Invasion: Strangers in their Own Land. Jersev City, 1985, p. 24.
27. Նույն տեղում, էջ 30: